ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

23 ապրիլի 2015 թվականի **թիվ 39** քաղ. Մոսկվա

«Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 024/2011) փոփոխություններ կատարելու վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 52-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ կանոնակարգի թիվ 1 հավելվածի 29-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9–ի թիվ 883 որոշմամբ հաստատված «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգում» (ՄՄ ՏԿ 024/2011) կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիսը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Ի. Շուվալով**

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի
ապրիլի 23-ի թիվ 36 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում կատարվող

1. Հանել «Բովանդակություն» բաժինը:

2. [1-ին գլխի 1-ին կետի փոփոխությունները վերաբերում են միայն ռուսերենին]:

3. 5–րդ հոդվածի 3–րդ կետի՝

ա) 2-րդ ենթակետի «սահմանման մեջ շարադրված, սույն տեխնիկական կանոնակարգի 3-րդ հոդվածով եւ 3-րդ եւ 4-րդ հավելվածներով սահմանված» բառերը փոխարինել «սահմանումների մեջ նշված, սույն տեխնիկական կանոնակարգի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով եւ դրան կից 3-րդ եւ 4-րդ հավելվածներով նախատեսված» բառերով.

բ) 4-րդ ենթակետի առաջին նախադասության մեջ «սահմանման մեջ շարադրված, սույն տեխնիկական կանոնակարգի 3-րդ հոդվածով եւ 3-րդ հավելվածով սահմանված» բառերը փոխարինել «սահմանումների մեջ նշված, սույն տեխնիկական կանոնակարգի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով եւ դրան կից 3-րդ հավելվածով նախատեսված» բառերով:

4. 8-րդ հոդվածի՝

ա) երկրորդ պարբերության առաջին նախադասության մեջ «3-րդ

հոդվածում եւ 3-րդ, 4-րդ հավելվածներում նշված, հասկացությունների հիման վրա ձեւակերպվող մթերքի անվանման մեջ» բառերը փոխարինել «սույն տեխնիկական կանոնակարգի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով եւ դրան կից 3-րդ եւ 4-րդ հավելվածներով նախատեսված, հասկացությունների հիման վրա ձեւակերպվող մթերքների անվանումների մեջ» բառերով.

բ) 1-ին կետի առաջին նախադասության մեջ «3-րդ հոդվածով սահմանված անվանմանը» բառերը փոխարինել «2-րդ եւ 3-րդ հոդվածներով նախատեսված սահմանումներին» բառերով.

գ) 2–րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Սննդային ճարպայուղային արտադրանքի բաղադրությունը:

Սննդային ճարպայուղային արտադրանքի բաղադրությունը նշելու պահանջ չի սահմանվում մեկ բաղադրիչից բաղկացած սննդամթերքի համար այն դեպքում, երբ սննդամթերքի անվանումը համընկնում է բաղադրիչի անվանման հետ:».

դ) 10-րդ կետի 4-րդ ենթակետի «բուրավետիչների» բառը փոխարինել «չկշռածրարված սննդային ճարպայուղային արտադրանքի համար բուրավետիչների» բառերով:

5. 19-րդ հոդվածի՝

ա) 1–ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Ճարպայուղային արտադրանքի համապատասխանության գնահատման ժամանակ հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության տարածքում, դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը, որը համարվում են արտադրող կամ վաճառող կամ արտադրողի կողմից լիազորված անձ:».

բ) 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

6. [2-րդ հավելվածի անվանման հետ կապված փոփոխությունները վերաբերում են միայն ռուսերենին]: